

Ծեսը որպես սոցիոմշակութային հիշողություն

Արդի դարաշրջանը մարդուց և հասարակությունից պահանջում է պատասխանել ժամանակի նոր մարտահրավերներին, միաժամանակ պահպանելով կյանքի բնականոն զարգացումը: Ապագան կանխատեսելի և կառավարելի դարձնելու արդի միտումների շրջանակներում արտադրության զարգացումը պահպանելու և սոցիալական կյանքի կազմակերպման հուսալիությունը ապահովելու նպատակով ծագում են մարդկային գործունեության սահմանափակման մի շարք խնդիրներ: Այս առնչությամբ նոր հնչեղություն են ձեռք բերում վարքի կարգավորման ծիսական ձևերի ու եղանակների հիմնահարցերը:

Ավանդույթները, սովորույթները և ծեսերը հանդիսանում են պատմական փորձի փոխանակման և տեղեկատվության կուտակման մեխանիզմներ: Ամեն մի նոր սերունդ կարող է այդ փորձի վրա ավելացնել իր արդիական փորձը: Ավանդապահ հասարակությունում հիմնավորելով մշակույթի հիշյալ գործառույթները, մարդիկ այն անընդհատ վերարտադրում են, իսկ հարկ եղած դեպքում նաև արդիականացնում՝ մնալով ավանդույթների շրջանակներում: Այս հիմքի վրա տեղի է ունենում մշակույթի գործառնությունը: Ավանդույթներն ու ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական, ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ՝ ժողովրդի համար կենսական և բախտորոշ նշանակություն ունեցող սոցիալ-քաղաքական անցուդարձերի կապակցությամբ: Դրանք հարուստ և վստահելի նյութ են տալիս լուսաբանելու հեռավոր և մոտ անցյալը: Ավանդույթների ու ծեսերի շնորհիվ հիանալի կերպով պահպանվել և սերնդե սերունդ է փոխանցվել պատմական կյանքի բոլոր էական կողմերը: Դրանք միշտ եղել են տվյալ ժողովրդի բնավորության գծերի ցայտուն արտահայտությունը: Դարերի ընթացքում հարատևած հին ավանդույթների, ծեսերի ու արարողությունների բովանդակության և էության բազմակողմանի վերլուծության հիման վրա, կարելի է ցույց տալ, թե դրանք օրգանական կապ ունեն տնտեսության, առօրյա կյանքի ու կենցաղի, հոգեբանության ու աշխարհայացքի հետ:

«Ծես հասկացության տակ սովորաբար հասկացվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որը ունի արարողական բնույթ»¹: Սրանից հետևում է, որ ծեսը միայն ձևական բնույթ ունի, այսինքն արժեքները և նպատակները, որոնք ներկայացվում են ծիսական գործունեության միջոցով, չեն հանդիսանում անհատի արժեքներ: Մարդու առօրյա գործունեությունը կրում է ծեսի բնույթ: Գ.Զինմելը վերլուծելով բարձրախավ հասարակության

¹ Ионин А.Г., Социология культуры, М., 2004, с.166.

սովորույթները, ցույց է տվել, որ այն ամբողջությամբ բաղկացած է ծիսական բնույթ կրող արարողություններից: «Այդ հասարակության կանոնները թույլ չէին տալիս մարդկանց շփվելու կյանքի իրական հիմնախնդիրների հետ: Իրական կյանքի փոխազդեցությունները միշտ ծիսականացված են մեծ կամ փոքր չափով»²: Մասնագիտական գրականության մեջ ծեսերը դիտարկվում են երեք տարբեր իմաստներով. որպես միջանձնային առօրեական փոխգործունեության միջոց, որպես ադապտացված վարքի ձև, որպես անհատի կամ խմբի արժեքային բնութագիր կամ սոցիոմշակութային համակարգ:

Ծեսը որպես միջանձնային առօրեական փոխգործունեություն: Առօրեականության վերլուծությունը հիմնված է անտիկ փիլիսոփայության և սոցիալական ֆենոմենոլոգիայի վրա: Սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, ավանդական օբյեկտիվությանը սովոր մարդկանց համար դժվար է ընկալել առօրեային սոցիալական ֆենոմենոլոգիական մեկնաբանությունը: Այստեղ պետք է փորձ անել խախտել այդ պատմեչը, անուղղակի ճանապարհով արթնացնել մեկ այլ հայացք դեպի մշակութային կյանքը: Ինչպես նշում է Մ.Մ.Բախտինը. «Այստեղ օգտագործված է մարդու ամենաուժեղ երևակայությունը և խաբեբայությունը, որը մոտիվացվում և արդարացվում է զուտ փիլիսոփայական նպատակի համար, ստեղծելու զուտ այնպիսի իրադարձություն, որի համար պետք է օգտագործել փիլիսոփայական մտքեր»³: Սա հոգեբանական փորձ է՝ խախտելու առօրեական ընդհանուր ձևով ընդունված իրադարձությունները, ստեղծելու բացառիկ իրադարձություններ, որոնք կանխամտածված և ցուցադրական պատկերացումների տեղիք են տալիս: Հարց է առաջանում, թե ինչու՞ պետք է խախտել ավանդական ընդունված առօրեականությունը: Այս հակադրությունների մեջ բացահայտվում են այնպիսի եզրակացություններ և հետևություններ, որոնք չեն կարող առաջանալ նրա բնականոն զարգացման ընթացքում: Սակայն առաջ է գալիս այն պահանջը, որ անպայման պետք է խախտել առօրեականության փոխադարձ գործունեության կառուցվածքը: Չնայած նրան, որ առօրեան կյանքի ամենաթափանցիկ և պարզ ոլորտն է, սակայն այդ պարզությունը թվացյալ է: «Սովորական կյանքը» չի ենթարկվում վերլուծության այնքան ժամանակ, մինչև չի բախվում առօրեականության որևէ խախտման հետ: Առօրեա գործունեությունը փորձում է կարգավորել և բերել այն նախնական ձևի:

² Зуммель Г. Общение. Пример чистой или формальной социологии. -Социологические исследования, 1984, N 2, с.56.

³ М.М.Бахтин,-К методологии гуманитарных наук, М.:Искусство, 1979, с.38.

Մարդը ունի որոշ հանգուցային կետեր, որոնց իրագուծումը նրա համար հանդես է գալիս իբրև նպատակ: Այս հանգուցային կետերից յուրաքանչյուրը մարդու առաջ դնում է որոշակի պահանջներ: Գիտակցելով այդ պահանջների կարևորությունը, մարդկանց մոտ ձևավորվում է նոր զգայական վերաբերմունք այդ հարցի լուծման համար: Զգայական ապրումները և մտքերը մարդու մոտ առաջացնում են կյանքի փոփոխության անհրաժեշտության գիտակցում: Մարդու հասարակական բնույթից բխում է նրա զգայությունների և մտքերի փոփոխման անհրաժեշտությունը: Փոփոխության այս ձևերը հետագայում հաստատվում են որպես այս կամ այն իրադրության ծիսական կողմ: Այն հանդես է գալիս որպես պատրաստի մեխանիզմ, որի միջոցով մարդիկ փորձում են դուրս գալ ստեղծված իրավիճակից՝ չփնտրելով այլ միջոցներ ու ելքեր: «Զգայությունների ու մտքերի ներքին գործունեության մարմնավորման ժամանակ առաջանում է ծեսը, տեղի է ունենում տարբեր մարդկանց զգայությունների ու պատկերացումների համընդհանրացում, մտքերի թռիչք»⁴: Սակայն սա կարող է հանգեցնել հասարակությունից անհատի կտրվածությանը: Բանն այն է, որ անհատն ունի իր ուրույն վերաբերմունքը և ամբողջությամբ չի կարող հետևել ծեսերի ընթացքին: Այս պարագայում ծեսը ձեռք է բերում հարաբերական ինքնուրույնություն և մի կողմից, կարող է խորացնել ու ամրացնել տվյալ գործունեության հետ կապը, մյուս կողմից, կարող է հանդես գալ որպես գործունեության ուղղություն ցույց տվող: Ծեսերը հատուկ նշանակություն են ստանում հատկապես կրոնում, քանի որ ծառայում են հավատացյալների կրոնական զգացմունքների ամրապնդմանը: Կրոնական ծեսերը կտրականապես տարբերվում են այն ամենից, ինչը շրջապատում է մարդուն իր առօրյա կյանքում: Այդ ծեսերը /եկեղեցու լուսավորվածությունը, երաժշտությունը, արվեստի գործերը և այլն/ հոգեբանական խոր ազդեցություն են թողնում մարդկանց վրա:

Ծեսերը կազմված են ձևից ու գործողություններից: Նրանց միջև կապն այնպիսին է, որ ձևի փոփոխությունների դեպքում գործողությունները կարող են պահպանվել: Մարդկանց աշխարհայացքային փոփոխությունների հետ մեկտեղ փոփոխվում են նաև ծեսերը: «Եթե նախկինում ծեսը իր մեջ ներառում էր արվեստի տարբեր ձևեր և ծառայում էր որպես ձեռք բերածը պահպանելու միջոց, ապա մեր օրերում այն գեղագիտական դաստիարակության դեր է կատարում»⁵: Ծեսի գեղագիտական կողմը ինչքան էլ զարգանա, չի կարող փոխարինել պրոֆեսիոնալ արվեստին: Արվեստը փոփոխվող է: Ծեսը իր մեջ կարող է ընդգրկել միայն արվեստի

⁴ Суханов И.В., Обычаи, традиции и преемственность поколений, М.,1976, с.48.

⁵ Западноевропейская эстетика XX века . М., 1991, с.12.

որոշ տարրեր: Ծեսերում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործող, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ: Ծեսերը հանդիսանում են որպես հասարակական հարաբերությունները փոխանցող մեխանիզմ:

Ժողովրդական ծեսերը ուսումնասիրողները ձգտում են ծեսերի սկզբնաղբյուրները հանգեցնել նախնադարյան մոգությանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծիսական արարողությունները ի վերջո համապատասխանում են հասարակական հարաբերություններին և, որպես կանոն, այս կամ այն չափով դառնում ժողովրդական հոգսերի և ուրախությունների արտահայտման միջոց: «Ծեսերում արտացոլվում են բնության և հասարակական կյանքի դիցաբանական ընկալումները. նրանցում մարդը երևակայության մեջ և երևակայության միջոցով անգիտակցական ու պատկերավոր ձևով մարմնավորում ու աստվածացնում է իր համար անըմբռնելի և իր վրա իշխող մութ ու տարերային ուժերին»⁶: Մինչդեռ ավանդույթներում մարդու աշխարհճանաչողությունը ունի ավելի գիտակցական ու իրականությանը մոտ բնույթ և առաջնայինը ոչ թե աստվածներն են, այլ բնության և հասարակական կյանքի հակոտնյա ուժերի դեմ պայքարող մարդիկ: «Նրանց մեջ դրոշմված է տվյալ ժողովրդի հավաքական կենսափորձն ու գիտելիքները, նրա ճաշակն ու ըմբռումները, դատողություններն ու գնահատականները: Նրանց միջոցով եկող սերունդը գաղափար է կազմում իր ապրած բնաշխարհի առանձնահատկությունների ու հարազատ ժողովրդի պատմական անցյալի, մոտիկ ու հեռավոր ազգերի հետ ունեցած շփման ու փոխհարաբերությունների մասին»⁷:

Ծեսը որպես ադապտացված վարքի ձև: Կան սոցիալական վարքի երկու հակադիր ձևեր. առաջին՝ երբ ձևը ավելի կարևոր է նպատակից և երկրորդ՝ նպատակաուղղված վարք: Լայն իմաստով ծեսը մի գործողություն է, որը չունի ուղղակի նպատակ, այլ կատարվում է, քանի որ այդպես է ընդունված: Մարդկանց ամենօրյա վարքում առկա են ծեսերի շատ տարրեր: Շատ դեպքերում ավելի հարմար է վարվել այպես, ինչպես ընդունված է, քան մտածել, թե ինչպես է ավելի նպատակահարմար: Ծիսական արարողությունների ժամանակ /հարսանյաց հանդեսներ, թաղման արարողություններ, ծննդյան տոներ և այլն/ կարևորը գեղարվեստական ձևավորումն ու սպասարկման ձևն է և ոչ թե արժեք ներկայացնել նվերը կամ սեղանին դրված մթերքը: «Եթե նախապես իրական հարաբերությունները ձևավորված չեն, ապա ծեսերը ստեղծում են տվյալ իրադրությունում վարքի ձևավորման համար անհրաժեշտ կարծրատիպ»⁸:

⁶ Мифы народов мира, т.1. М., 1992, с.61

⁷ Суханов И.В., Обычаи, традиции и преемственность поколений, М.,1976, с.71

⁸ Ю.А.Шрейдер, Ритуальное поведение и формы косвенного целеполагания.-Психологические механизмы регуляции социального поведения, М.,1979, с.106.

Ավանդական վարքի կարևոր հատկությունն այն է, որ այն միջոցների նկատմամբ պետք է ունենա ստույգ հարաբերություն: Ծեսերի ժամանակ կարծես կորում է նպատակի և միջոցի հակադրությունը: Ծեսերը ստեղծվում են ըստ սոցիալական խմբերի կարգավիճակի ու հնարավորությունների: Պետք է նկատել, սակայն, որ այդ խմբերում առկա են նաև ավանդական վարքի դրսևորման ընդհանրություններ: Ցանկացած արարողություն ունի իր զուտ ավանդական իմաստը: Օրինակ՝ ձեռքը համբուրելը առաջին հերթին ողջունելու բարեհամբույր ձև է, թեև այն կարող է արտահայտել զգացմունքների մի ամբողջություն՝ /սեր, ատելություն, հիացմունք և այլն/:

Ծեսը արժեքավոր է նրանով, որ մարդկանց թելադրում է այնպիսի պահանջներ, որոնք հետաքրքրում են նաև ողջ հասարակությանը: Այն մասնավորապես ապահովվում է իրականության նպատակաուղղված վարքի այնպիսի միջոցների ընտրություն, որոնք իրենց հերթին, ձևավորում են նպատակների որոշակի ընդհանրություն: «Սովորաբար իրական գործունեությունը լինում է հարկադրված, մինչդեռ ծեսը ընդունվում է ազատ ընտրության արդյունքում»⁹: Եթե, օրինակ, ինչ-որ միջոցառման համար պահանջվում է մասնակիցների հարյուր տոկոսանոց մասնակցություն, ապա խախտվում է ավանդական արարողությանը բնորոշ ազատ մասնակցության իրավունքի սկզբունքը: Մարդը, օրինակ, ազատ իրավունք ունի Նոր Տարվա գիշերը քնել կամ արթուն մնալ: Այլ կերպ ասած՝ ծեսը չի ոչնչացնում անհրաժեշտը, այլ ստեղծում է մարդկային վարքի ազատ ոլորտ: Աննպատակ վարքի դեպքում մարդը բացահայտում է իր մարդկային հատկանիշները՝ ընկնելով ծեսի փորձարարական ոլորտ: Դժվարին պահերին, երբ պահանջվում է նպատակաուղղված գործունեություն, բացահայտվում են մարդու սոցիալական որակները /խելքը, բարյացկամությունը և այլն/: Մարդը իր կարողություններն ու ունակությունները բացահայտում է ազատության մեջ: Նրա շփվելու ունակությունները բացահայտվում են այն ժամանակ, երբ միջավայրում չկա հակադրություն, երբ հարկադրաբար չեն ճնշում նրան: Այս առնչությամբ հարց է ծագում, թե ինչու՞ են մարդիկ գնահատում ծեսերը: Ծեսի ժամանակ մարդիկ ինչ-որ իմաստով հավասարվում են: Սակայն մարդկանց հավասարությունը անհասանելի է և, ինչպես Շրեյդերն է նշում, «կան խելոքներ ու հիմարներ, գեղեցիկներ ու տգեղներ, թույլեր ու ուժեղներ և նրանց կարելի է հավասարացնել միայն նույն սրվակում

⁹ Ю.А.Шрейдер, Ритуальное поведение и формы косвенного целеполагания.-Психологические механизмы регуляции социального поведения, с.109.

ընդհանուր գենոտիպով նրանց բազմացնելով»¹⁰: Ծեսը կարծես բավարարում է հավասար լինելու պահանջմունքը: Թեև, օրինակ, թագավորը չի կարող հավասար լինել իր ծառաներին, բայց ծեսի ժամանակ նրանցից յուրաքանչյուրը կատարելով իրեն վերապահված դերը, կարծես հավասարվում են: Նույնը կարող ենք ասել մոդայի դեպքում: Նույն մոդայով հագնված մարդիկ կարծես թե հավասարվում են, սակայն դա թվացյալ հավասարություն է: Մոդան միայն ընդհանուր սկզբունքներ է տալիս, որին հետևելը ապահովում է հավասարությունը: Ընդհանուր առմամբ ծեսը հանդիսանում է մարդկային հանրության հիմքը: Ընտանիքն, օրինակ, ձևավորվում է ընդհանուր արարողությունների, ծեսերի, տոների, սովորույթների, ավանդույթների հիման վրա: Ծեսը մարդկանց միջև կապ է ստեղծում այնպիսի իրադրություններում, երբ բացակայում են անհատական կապերը: Կոնկրետ ծեսը կարող է լինել պայմանական, բայց այն լավ պահպանվում է, երբ պայմանական ձևի մեջ արտահայտում է ոչ պայմանական իմաստ /օրինակ՝ Նոր Տարին նշում են տարբեր օրեր, քանի որ օրերը պայմանական են/: Ծեսի հիմքում ընկած է մեր կյանքի որոշ իրադարձությունների նկատմամբ զգայությունը: Ծեսի ձևը կարող է փոփոխվել, բայց պահանջը միշտ մնում է նույնը /օրինակ՝ հյուրասիրության ժամանակ տարբեր մարդիկ տարբեր զբաղմունք են գտնում, բայց հյուրասիրության նպատակը մեկն է. արարողությունը լավ անցկացնեն/: Ծիսակատարությունը կապված է այն զգացողության հետ, թե մենք ինչ տեղ ունենք հասարակության և պատմության մեջ: Մարդու վարքը, կախված շրջապատող միջավայրից, ոչ թե պահպանողական, ավանդապահ բնույթ ունի, այլ հարմարվողական: Մարդկային այն խմբի համար, որի գործունեությունը նպատակաուղղված է ծեսը մեծ մասամբ դառնում է անիմաստ: Հավերժության զգացողությունը անիմաստ է, ավելի կարևոր է զգալ ժամանակը և քայլել նրան համընթաց:

Ավանդական վարքի ամբողջական պատկերը շատ յուրահատուկ է: Այդ վարքի դրսևորման ժամանակ չմիջնորդավորված նպատակը անկախ է և իրենից ներկայացնում է ծեսի անմիջական կատարում: Սուբյեկտի կամքի դրսևորումը ուղղված է այն բանին, թե վարքի ի՞նչ ձև է դրսևորվում: Փաստորեն այն նպատակը, որին պետք է հասնել և որը ծեսին տալիս է սոցիալական իմաստ, պատճառականորեն կապված չէ ավանդական վարքի միակ փաստի հետ: «Ծեսը դառնում է հասարակական վարքի դրսևորման մշտական բաղադրիչ մասը: Վարքի դրսևորման ավանդական բնույթը նշանակում է, որ նրա դրսևորման գլխավոր

¹⁰ Ю.А.Шрейдер, Ритуальное поведение и формы косвенного целепологания,-Психологические механизмы регуляции социального поведения, М.,1979, с.110.

նպատակը հետևողականությունն է»¹¹: Կարելի է ասել, որ ծեսի դրսևորման ժամանակ միջոցը ավելի կարևոր է, քան նպատակը: Ավանդական վարքի ձևից կարելի է տարբերել վարքի *ցուցադրական* ձևը: Այստեղ նպատակը չմիջնորդավորված ձևով կապված է նշանային հարաբերության հետ, որը, անշուշտ, տարբերվում է պատճառա-հետևանքային հարաբերությունից /օրինակ՝ բարևելու ժամանակ ձեռքը չմեկնելը նշանակում է հրաժարվել բարևելու ավանդական ձևից/: Ազատ վարքի դրսևորման նպատակն այն է, որ տվյալ վարքի շրջանակներից դուրս ոչինչ չի լինում և պատճառականորեն այն հիմնավորված չէ: Այս վարքի դրսևորման ժամանակ նպատակը պարզ գիտակցվում է: Այստեղ կամքը ուղղվում է տվյալ ձևին, իսկ ձգտումը լիովին գիտակցվում է: Վարքի հաջորդ ձևը *դերասանական* ձևն է: Վարքի այս ձևի մեջ նպատակը մղվում է երկրորդ պլան: Դերասանական վարպետության համար կարևորը դերի մեջ մտնելն է: Այս ձևով համադրվում են ծիսական և ցուցադրական վարքի ձևերը: Նպատակը հասանելի է դառնում անուղղակի ճանապարհով: Ի տարբերություն մյուս ձևերի, այստեղ նպատակը չի բխում ձևի պահպանումից:

Առաջին հայացքից թվում է, թե անուղղակի նպատակադրությունը ինքնախաբեություն է: Ճշմարիտ է այն տեսակետը, ըստ որի ծեսը ծագում է այն պատճառով, որ սուբյեկտը դեռևս չի գիտակցում նրա աննպատակությունը: Եթե սուբյեկտը գիտակցել է կոնկրետ ծեսի նպատակը, ապա վերջինս դադարում է այդպիսին լինելուց: Վարքը պլանավորելը դուրս է մարդկային հնարավորության սահմաններից: Իսկ անուղղակի նպատակադրությունը տալիս է կողմնորոշվելու հնարավորություն: Եթե սուբյեկտը գործում է ելնելով առասպելական ըմբռնումից, հիմնավորում է իր վարքը որպես պատրաստի առասպելի իրագործում, ապա նրա չմիջնորդավորված նպատակները պայմանավորված են այդ առասպելով: Առասպելը նախամարդու և ընդհանրապես աշխարհի զգայական վերարտադրման և իմաստավորման միջոց է, կյանքի ռացիոնալ իմաստավորման ձև: Ա.Լոսևը առասպելը դիտում է գիտականից, կրոնականից, հասարակականից և գեղարվեստականից անկախ՝ գտնելով, որ «առասպելական մտածողության տեսանկյունից ոչ մի դեպքում չի կարելի ասել, թե առասպելը երևակայության խաղ է: Առասպելը լարված իրականություն է: Այն հորինվածք չէ, այլ վառ իրականություն»: ¹² Անուղղակի նպատակադրությունը ձևավորվում է որոշակի նախնական կառուցվածքների առանձնացումով: Այս կառուցվածքները կարելի է նույնացնել առասպելական արխետիպերի/նախաձևերի/ հետ: Առասպելի էությունը ոչ թե

¹¹ Кэмпбелл Д.Т., Социальне диспозиции индивида и их групповая функциональность.- Психологические механизмы регуляции социального поведения, М.,1979, с.86.

¹² А.Ф.Лосев. Философия, Мифология, Культура. М., 1991, с.24.

իրականությունից դուրս գալն է, այլ ելնելով նրանից այդ երևույթներին բացատրություն տալը: Չնայած առասպելը չի կարելի դիտել որպես գործողությունների մոդել: Առասպելը ավելի շուտ համապատասխանում է նրան, ինչ մաթեմատիկական տրամաբանության մեջ ընդունված է ասել տեսություն: Իսկ այստեղ առասպելը հանդես է գալիս որպես սոցիալական հիշողություն՝ պահպանելով ժամանակի հասարակական ինքնագիտակցության կառուցվածքը: «Առասպելը այն կառուցվածքն է, որը հնարավորություն է տալիս հիշել իրականության մասին: Այս դեպքում հնարավոր է «սուտ առասպելներ» այն իմաստով, որ նրանք իրականությունը կապում են գործող կառուցվածքների հետ»¹³:

Ծեսը որպես անհատի կամ խմբի արժեքային բնութագիր կամ սոցիոմշակութային համակարգ:

Ցանկացած նպատակի կարելի է հասնել միայն այլ մարդկանց հետ ունեցած միասնական գործունեության պրոցեսում : Միայն համընդհանուր ուժերով կարելի է իրագործել նպատակը, հասնել նպատակաուղղվածության: Կազմակերպության մեջ մարդու վարքի գործունեությունը սոցիալական վարքի հատուկ ձև է: Սոցիալական կազմակերպության բնույթը հասկանալու համար պետք է բացահայտել, թե կազմակերպության շրջանակներում ինչպե՞ս է ձևավորվում մարդկանց միացյալ գործունեությունը: Սովորաբար սոցիալական կազմակերպությունը դիտվում է որպես համակարգի հատուկ ձև, կամ որպես շարժուն համակարգ, որը կարող է գտնվել տարբեր իրավիճակներում, կախված նրանից, թե՞ ինչ պարամետրեր է նրան տրված: Համակարգը ձևավորվում է այն պահանջմունքների հիման վրա, ինչը պահանջում են հասարակությունը և սոցիալական խմբերը: Համակարգի գործառնության հիմնական նպատակը պահանջմունքների բավարարումն է: Բայց այստեղ մենք բախվում ենք մի հիմնախնդրի հետ, ըստ որի յուրաքանչյուր անհատ իր հետաքրքրութ-յուններն ու հիմնախնդիրներն ունի և դրանց լուծումը և բավարարումը յուրովի մոտեցում է պահանջում: Ավանդույթներում այս կարծրատիպը երևում է անհատների նախնական ձգտումների իրագործումից: Այդ ձգտումները կարող են բավարարվել միավորվելու ճանապարհով: «Կազմակերպությունները հանդես են գալիս որպես մարդկանց նպատակաուղղված համակարգեր, որոնք համագործակցում են հանուն անհատի անձնական բարեկեցության»¹⁴: Բայց այս կազմակերպությունները չեն ձևավորվում այս կամ այն անհատի կամքով կամ նպատակների իրագործման համար: Սոցիալական համակարգերը ծագում են օբյեկտիվ հասարակական պահանջմունքներից, որը

¹³ Ю.А.Шрейдер. Формы косвенного целеполагания, М., 1979, с.126

¹⁴ Янг С. Системное управление организаций., М., 1972., с. 48-49

հասարակական գիտակցության մեջ արտացոլվում է ոչ թե անհատական, այլ հասարակական նպատակների ձևով: Սակայն դա չի նշանակում, որ կազմակերպության նպատակները չեն կարող լինել այս կամ այն անհատի նպատակ: Կազմակերպության կարևոր խնդիրներից մեկը իր անհատների վրա ունեցած ազդեցությունն է: Մտնելով այս կամ այն կազմակերպության մեջ մարդիկ կարող են առաջադրել նաև անձնական նպատակների և կազմակերպությունները չպետք է խոչընդոտեն դրանց իրագործմանը: Սոցիալական համակարգի առանձնահատկությունն հենց այն է, որ այստեղ կան և անհատական և սոցիալական նպատակներ:

Անցյալի ժառանգության պահպանման ձգտումը մոլուցքը մուտք է գործել մարդկային կենսագործունեության գրեթե ամեն մի բնագավառ: Այս առնչությամբ առանձնահատուկ հնչեղություն է ձեռք բերում հիշողության հիմնախնդիրը: Անցյալի վերհիշումը ակտիվ, կառուցողական գործընթաց է, այլ ոչ թե տեղակատվության վերականգնում: Հիշողության հետ կապված է որոշակի պատվախնդրություն՝ պահպանել հավատարմությունը անցյալի հանդեպ, այն դիտել որպես հիշողության տարածության ստվերոտ կողմ: Հիշողության հիմնահարցը քննարկելիս անհրաժեշտ է առաջին հերթին անդրադառնալ նրա առարկայական բնութագրին: Հստակ կարելի է նշել, որ իրադարձությունը պարզապես այն է, ինչ տեղի է ունենում: Այն ունի իր որոշակի տեղը: Այստեղ է Ի.Կանտի երրորդ տիեզերական անտինոմիայի իմաստը՝ իրադարձությունը կամ բխում է ինչ-որ նախորդող իրադարձությունից՝ հետևելով անհրաժեշտ պատահականությանը, կամ բխում է ազատությունից՝ հետևելով ինքնաբերական պատճառականությանը: Ֆենոմենոլոգիական տեսանկյունից հիշում ենք այն, ինչ արել ենք, փորձել ենք անել, փորձել ենք իմանալ այս կամ այն դեպքի մասին: «Դեպքերը դասավորվում են երկու բևեռների միջև՝ առանձին դեպքերի բևեռ և ընդհանուր դեպքերի բևեռ, որը կարելի է անվանել «իրերի դրություն»: Միակ իրադրությանը մոտ են կոնկրետ երևույթները /օրինակ արևի մայր մտնելը, միակ են նաև մեր հարազատների դեմքերը, խոսքերը/»¹⁵: Այսպիսով, իրերը և մարդիկ ոչ միայն ցույց են տալիս իրենց, այլև կրկնում են իրենց, շնորհիվ որի մենք հիշում ենք նրանց:

Հիշողության վերաբերյալ կան մի շարք երկրնտրանքներ: Դրանցից մեկը հիշողության-սովորության երկրնտրանքն է: Այս առնչությամբ Բերգսոնը համեմատական վերլուծության է ենթարկել հիշողություն-սովորություն և հիշողություն-մոռացություն երկրնտրանքները: Հիշողությունը և մոռացությունը երկու բևեռներ են:

¹⁵ Рикёр П., Память, история, забвение, М.,2004, с.44

Ֆրանսիացի փիլիսոփա Պոլ Ռիկյորը նշում է, որ «որևէ առանձին կարդացածի մոռացությունը միայն պատկերացում է, միաժամանակ սովորած դասը ավելի շուտ «արված է», քան ներկայացված, մոռացության պատկերացումը մեզ թույլ է տալիս բարձրանալ մեր անցած կյանքի ուղիով, որպեսզի այնտեղ գտնենք ինչ-որ առանձնացված կերպար»¹⁶:

Հիշողությունը, որը կրկնվում է, հակադրվում է այն հիշողությանը, որը արտացոլում է: «Որպեսզի անցյալը տեսնել պատկերի մեջ, պետք է ունենալ ետ մղելու հմտություն, պետք է կարողանալ գնահատել անպիտանը, պետք է երազել: Միայն մարդն է ընդունակ անելու այս ամենը»¹⁷: Սա մի ընդարձակ ոլորտ է, որի մեջ ընդգրկված են գործունեության տարբեր մակարդակներ: Սկզբնական շրջանում գործ ունենք «ես կարող եմ» մոդալ բանաձևի հետ, ըստ որի, մարդն ամենակարողն է՝ ունի խոսելու ունակություն, պատասխանատվության զգացում, պատմելու կարողություն և այլն: Այս ամենին պետք է ավելացնել սոցիալական սովորույթները, նպատակները, համատեղ կյանքի բոլոր երևույթները, որոնցից մի մասը կիրառվում է սոցիալական ծեսերի մեջ:

Երկրորդ երկընտրանքը ստեղծվում է հիշողության վերականգնում-հիշողության կանչի միջև: Հիշողության վերականգման տակ պետք է հասկանալ անցած մոռացությունը: Հիշողության վերականգման հակադրությունը հիշողության մեջ՝ զգայությունն է: Հիշողության վերականգնումը, որպես այդպիսին, իր մեջ հանելուկ է կրում, որից բխում են Պլատոնի և Արիստոտելի հետազոտությունները, որոնք վերաբերում են անցյալի նկարագրությանը այն բանի, ինչը բացակայում է և որը առաջ ընդունված, փորձված և ճանաչված է եղել:

Երրորդը՝ հիշողության վերականգնում - հիշողության որոնումն է: Պլատոնը առասպելացրել է սա, այն կապելով մինչև ծնվելը ունեցած և մոռացության ուժով կորցրած իմացության հետ: Սա հիմնավորվում է նրանով, որ հոգու կյանքը սկսվում է մարմնում: Ըստ Արիստոտելի հիշողությունը այն ամենի վերականգնումն է, ինչը եղել է տեսնված, փորձված կամ անցյալում սովորած, այլ կերպ ասած՝ կրկնություն է: Երբ հիշում ենք անցյալը կամ բախվում ենք ներկայի հետ, առաջ է գալիս երկու իրավիճակ՝ լարվածություն և թուլացում:

Յուրաքանչյուր մարդ ունի իր ինքնակենսագրական հիշողություններ որոնք ամբողջությամբ հիմնված են անձնական կենսափորձի վրա: Մարդը ունի նաև որոշ հիշողություններ, որոնք նա կիսում է այլ մարդկանց հետ: Սա ցույց է տալիս, որ հիշողությունն ունի ընդհանրա-կան բնույթ: «Հասարակության կոլեկտիվ

¹⁶ Рикёр П., Память, история, забвение, с.49

¹⁷ Рикёр П., Память, история, забвение, с.59

հիշողությունը լրիվ տարբեր է այդ հա-սարակության բազմաթիվ անհատ անդամների անձնական հիշողությունների հանրագումարից, քանի որ ներառում է միայն այն հիշողությունները, որոնք սովորաբար կիսվում են հասարակության բոլոր անդամների կողմից»¹⁸: Միևնույն ժամանակ չպետք է շփոթելու հասարակության կոլեկտիվ հիշողության անձնավորված դրսևորումներն իրոք անձնական բնույթ ունեցող հուշերի հետ: Մեր ծնողները, ազգականները երբեմն մեր մանկական տարիներից դեպքեր են հիշում, որոնք մենք չենք կարող հիշել: Մեր կյանքի շատ հիշողություններ իրականում վերհուշեր են այն պատմությունների, որոնք մենք չենք կարող հիշել: Դիտելով, փորձելով, սովորելով վերհիշում են ոչ միայն իրենք իրենց, այլ նաև ներաշխարհային իրավիճակներ, որտեղ դիտել, փորձարկել և սովորել են: Վերհուշը ստիպում է հիշել ինչ-որ բան, մտածել ինչ-որ բանի մասին: Այստեղ խոսքը այն ուղեցույցների մասին է, որոնք թույլ չեն տալիս մոռացության: Դրանք բաժանվում են երկու խմբի՝ ներքին և արտաքին: Առաջին դեպքում մեծ դեր են խաղում նկարագրությունները, ներքին զգացողությունը, իսկ երկրորդ դեպքում մեկ առարկայի միջոցով հիշեցնում են մյուսին /նկարներ, գրառումներ և այլն/:

Տարբերակվում են հիշողության մի քանի տեսակներ՝ պատմական, ինքնակենսագրական, տեղային, կոլեկտիվ և այլն: Ինքնակենսագրական հիշողությունը հիշողություն է այն իրադարձությունների մասին, որոնք մեր կենսափորձի արդյունք են: Մինչդեռ պատմական հիշողությունը այն հիշողությունն է , որ մեզ է հասնում միայն պատմական գրառումների միջոցով: Կոլեկտիվ հիշողությունը ակտիվ անցյալն է, որը ձևավորում է մեր ինքնությունը: Անհատը պետք է հիմնվի պատմական հիշողության վրա: Օրինակ, Ղարաբաղյան շարժման հանրահավաքի մասնակիցներից յուրաքանչյուրն ուներ իր անահատական հիշողությունը, սակայն, երբ որևէ ելույթի ժամանակ կոչ էր արվում հիշել թուրքերի գազանությունները, մասնակիցները վերաճում էին կոլեկտիվ, ոչ անհատական հիշողության կրողների խմբի: «Կոլեկտիվ հիշողությունը գործողության կամ գործողությունների շարքի արդյունք է, ու դրանից հետո՝ կրելով մեր անհատական հիշողությունները, մենք կրում ենք նաև կոլեկտիվ հիշողության որոշակի տարրեր»¹⁹: Հասարակության հիշողությունը հետ է գնում միայն այնքան հեռու, որքան ի վիճակի է, այսինքն՝ այնքանով է ետ գնում, որքանով նրա բաղկացուցիչ խմբերի հիշողությունն է:

Տեղային հիշողության ժամանակ մենք հիշում ենք մեր ճանապարհորդությունները, տեսարժան պատմական վայրերը, որոնց հետ կապվում է մեր հիշողությունը: Սա կապ է պատմության և հիշողության: Այստեղ խնդիր է դրվում

¹⁸ Гидденс Э. Устроение общества. М., 2005, с. 98

¹⁹ Рикёр П., Память, история, забвение, с.133

տեղի և ժամանակի առումով: Ինչպես նշում է Բերգսոնը. «մեր կյանքի ամենօրյա իրադարձությունները, որոնք հանդես են գալիս հիշողության ձևով, իսկ հիշողությունը բաց չի թողնում ոչ մի մանրուք և ամեն մի փաստին ցույց է տալիս իր տեղն ու ժամանակը»²⁰:

Անդրադառնալով ծեսերին ու ավանդույթներին, մենք չենք կարող չանդրադառնալ ժամանակի և տեղի խնդրին: Հավերժացումը տեղի է ունենում սովորույթների կրկնությամբ, անկախ այն բանից, թե որ սովորույթն է ժամանակի ընթացքում կորում: «Արդյո՞ք վերհուշը կերպար է, և եթե այո, ապա ինչպիսի՞: Արդյոք այս հասկացության տակ չի հասկացվում անցյալի կերպարը»²¹: Այս ֆենոմենոլոգիայի մտահղացողը Արիստոտելն էր: Նա նշում էր, որ նկարը, պատկերը, կարելի է դիտել կամ որպես նախկինում գործող կերպար, կամ պարզապես կերպար, որը նշանակում է բացակայող իր: Առօրյա խոսքում մենք նույնացնում ենք «կերպար» և «պատկերացում» հասկացությունները, բայց միասին դրանք պարզաբանում են կերպարի հասցեատիրոջը: Երբ պատկերացումը գործ ունի հորինված գոյությունների հետ, այն չի արտացոլում իրականը: Վերհուշը ենթադրում է անցյալի առարկաները այն ժամանակ, երբ պատկերացումը ունի հնարավորություն ենթադրությունը ներկայացնելու որպես անուղղակի: Պետք է նշել նաև, որ գոյություն ունի «մաքուր» հիշողություն, որը դեռ չի վերածվել կերպարի: «Որպեսզի անցյալը ներկայացվի կերպարի ձևով, պետք է ունենալ հնարավորություն ունենալ ներկայում կատարվող գործունեությունները հեռացնել և կարողանալ գնահատել պիտանին ,պետք է ցանկանալ երազել: Միայն մարդն է ընդունակ կատարելու այս ամենը: Այնուամենայնիվ, անցյալը, որին մենք մոտենում ենք այս եղանակով, դժվար ըմբռնելի է, կարծես հետադարձ հիշողությունը խանգարում է այլ հիշողությանը, ավելի իրական կատարվող այն գործողություններին, որոնք մեզ պատրաստում են կյանքի ընթացքին»²², - նշում է Բերգսոնը: Այստեղ խոսքը և մաքուր հիշողության մասին է, որը արտացոլում է, և այն հիշողության մասին, որը կրկնում, հիմնավորում է բաժանման մեթոդով: Խորքից դեպի մակերես, մթից դեպի լույս, լարվածությունից դեպի թուլացում, հոգեկան աշխարհի վերին շերտից դեպի ավելի խորը շերտեր շարժումը հանդիսանում է հիշողության աշխատանքի բովանդակությունը: Հիշել, նշանակում է ոչ միայն ընդունել, ստանալ անցյալի կերպարը, այլև փնտրել, ինչ-որ բան անել: Սա նշանակում է, որ հիշողությունը աշխատում է: Հիշողության իրականացումը նրա օգտագործումն է, հետևաբար

²⁰ Бергсон А., Материя и память, с 207-208

²¹ Рикёр П., Память, история, забвение, с.580

²² Бергсон А., Материя и память, с. 209

հիշողության ոչ ճիշտ օգտագործումը ենթադրում է նաև խախտման հնարավորություն: «Հիշողության ոչ ճիշտ օգտագործումից բխում է, որ ճշմարտությունը վտանգվում է: Բազմաթիվ արհեսավարժներ՝ բժիշկներ, գիտնականներ, իրավաբաններ, ինժեներներ, ուսուցիչներ հաճախ խուսափում են տեղեկատվություն հիշելուց, որը պարունակվում է արձանագրություններում, հարցման թերթիկներում: Նրանք բոլորը օգտվում են գործող հիշողությունից»²³:

Հիշողությունը անցյալը ակտիվացնող միջոց է, անհրաժեշտ ինֆորմացիայի վերականգման միջոց: Այս տեսակետը համընկնում է այն պատկերացման հետ, որի համաձայն անցյալի և ներկայի միջև կա հստակ սահման, իսկ հիշողությունը միջոց է վերակենդանացնելու անցյալը ներկայում: Եթե դա այդպես չէ, ապա հիշողության այս սահմանումը կորցնում է իր համոզչությունը: Ակնհայտ է, որ վերհիշելու կարողությունը կապված է հիշողության հետ, բայց այն ոչ մի դեպքում չի որոշում նրա բովանդակությունը:

Իրականության մեջ շատ իրադարձություններ են տեղի ունենում, որոնք աննկատ են մնում: Դա բացատրվում է նրանով, որ մարդը պարզապես զտում է իրեն ոչ պիտանի տեղեկատվությունը: «Եթե ներկան կտրված չէ սերունդների գործունեությունից, ապա հիշողությունը չի կարող լինել այլ բան, քան մարդկային իմացության բացահայտման ունակություն»²⁴, -նշում է Է.Գիդդենսը: Եթե հիշողությունը չի նշանակում անցյալի փորձ, ապա գիտակցությունը չի բնութագրում ներկան: Այն, ինչ մարդը գիտակցում է, չի կարող տեղադրված լինել ժամանակի որոշակի առանձնացված հատվածում: Այս դեպքում անհրաժեշտ է տարբերել գիտակցությունը որպես զգայական ընկալում, հիշողությունը՝ որպես գիտակցության սահմանում ժամանակի մեջ և հիշողությունը, որպես անցյալի փորձերը մարդկային գործունեության մեջ կրկնելու մեթոդ: Եթե հիշողությունը վերաբերվում է մարդկային այն փորձին, երբ պետք է իշխել ժամանակին, ապա պրակտիկ գիտակցությունը վերաբերվում է ընկալման հոգեբանական մեխանիզմներին:

Հիշողությունն անցյալը դարձնում է իրական արժեք, հարստություն, մեր կյանքի նշանակալի մաս, կարևորագույն հասարակական իրադարձության առաջ մղող, շարժիչ ուժ:

²³ Рукёр П., Память, история, забвение, с.89

²⁴ Э.Гидденс, Устройство общества, с. 99

